*կը տիրէ, հոն յայտնապէս կը հնչուի = a, ինչպէս որ յանգն կը ցուցնէ*[1]*։ Այս ամենէն կը հետեւի, որ հին հայերէն այ, ԺԳ և ԺԴ, դարերու կիլիկիոյ ժողովրդական կենդանի լեզուին մէջ, թէպէտ և դեռ ոչ այնպէս ընդհանուր, ինչպէս արդի արեւմտեան հայերէն*[2] *գաւառաբարբառի մէջ, այսու հանդերձ արդէն մեծաւ մասամբ զուտ* a *եղած է ։ Ի գրութեան սակայն հին երկբարբառական ձեւն դեռ ընդունելի մնացած է, և հետեւեալ տառադարձութիւնք կը ցուցնեն, որ գրական լեզուին մէջ հին երկբարբառական հնչումն, իբր ուսումնական և աւանդական՝ դեռ գործածական էր. այսպէս պայլ =* bail. *ֆայլեմ =* failem *և այլն։ Սակայն կարելի է որ կիլիկեան լեզուի ժամանակէն առաջ՝ երկբարբառական* (*այ* = ay) *հնչումն գործածական եղած չըլլայ։*

*Տաշեան*

---

1. *Այսպէս՝ օրինակի համար, Կոստանդեանցի հրատարակած (Թիֆլիզ 1892) միջին հայերէն երգերու մէջ՝ յանգ կը կազմեն փախենար և վայր* I, 11. *ուռայն և ամարժան* I, 36. *ունայն և կատարման* I, 36. *խաղայր և դիւանար* I, 42. *գայր և տըռար* I, 43. *կենայր և խապար* I, 43. *կու գայր, կու տայր և ձարտար* I, 43. *շատանայր և դըժար* I, 44. *երթայր և բարար* I, 44. *ամենայն և տան* I, 35. *միայն և չման* II, 6, *և այլն։*

2. *Ինչպէս՝ Լեհահայ, տաճկահայ և այլն, գաւառաբարբառներու մէջ։ Ընդհակառակն արեւելեան հայերէնի մէջ՝ ընդհանրապէս հին այ* (ai) *միաբարբառ* e *կ՚ըլլայ* (*հմմտ.* Palas. *էջ* 9)*։*

**ԲԻՒՐԱԿՆ**. — Կը հրատարակէ բանասիրական, տեղագրական, ազգագրական յօդուածներ։ Խմբ. *Ս. Պալքեան*։ — Գինն է 15 ֆր.։

Հասցէ Direction du «*Puraghn*» Bahtché kapou kazasker han N. 16 CONSTANTINOPLE.

# ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

## ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒՍԱԲ

(ՎԻՊԱԳԻՐ)

*Չէ եղած դար մը բոլոր մարդկութեան պատմութեան մէջ, այսքան զօրաւոր կերպով կռուող մարդկային ընկերական կարգ ու սարքին դէմ՝ որչափ անցեալ ԺԹԴ դարը։ Բոլոր*



*Սրբուհի Տիւսաբ:*

*մարդկութիւնը կարծես իր վիճակէն կը զժգոհի և գոհունակութիւնը խոյս տուած է մարդոց մէջէն։*

*Դարուն եզրակացութիւնը եղած է կարծես՝ դարուս սկիզբն Եւրոպան խռովող հաւասարութեան նուիրական սկզբունքին երկու խոշոր և հակաբնական ծայրայեղութիւններն, որոնք մարդկային ընկերական կազմակերպութեան հիմերը կործանելէ զատ՝ անոր շէնքը կործանել, և ընտանիքը, անհատականութիւնը — որ ամէնէն աւելին է — աշխատութիւնը սպաննել կը ջանան։ Այս երկու ծայրայեղութիւններն են, ընկերվարութիւնը՝* (socialisme)*, որ բնութենէն իսկ մարդուն չշնորհուած հաւասարութիւնը՝ մարդուն տալու անօրինակ և անտեղի նպատակաւ, աշխատութիւնը սպաննել կը ձգտի, մարդոց*